Պետրոս. Ցետ բազում բանից մեծաբանս սնոտեաց բարբառեալ պատրեն ցանկութեամբ մարմնոյ զայնոսիկ որ ազատութիւն խոստանան եւ ինքեանք ապականութեան ծառայք են, զի Որով իւիք եւ յաղթիցի ոք՝ նոցին եւ ծառայէ. զի թէ Փախուցեալք ի պղծութեանց աշխարհի դարձեալ ընդ նոյն շաղախին՝ լիցի վախճան նոցին չար քան զառաջինն. եւ զայն տե՛ս որ ի կարգին խօսի։ Եւ վասն այսպիսեաց յամենայն գիրս՝ եւ զի՛նչ զլացութիւն պղծասիրաց, որ ի գրաւորականն եւս էր խոտելի։ Սուրբ եմ ես, ասէ Տէր, կամ ի պիղծս մի՛ մերձենայք. Խորտակեսցի բազուկ մեղաւորին եւ անօրէնք իբրեւ զծով ծփեսցին։ Եւ առարկեն՝ թէ չնորհքն Քրիստոսի սրբէ զպղծութիւն մեր։ Պատասխանի. Վա՜յ ձեզ, զի անուն իմ հայհոյի ի մէջ հեթանոսաց, եւ թէ՝ ի բաց գնաց[էք] մշակքդ անիրաւութեան, եւ թէ՝ Քարոզես չչնալ՝ շընաս, այլովք։ Ուրեմն սուտ են եւ զիրք ձեռնադրութեան, սուտ են եւ կանոնացն, եւ սուտ այլ ի վեր գրեանք։ Լաւ ի միտ ա՛ռ զընթերցեալ գիրսդ, խորամանկութեամբ հաւատք չէ եւ դատարկ է առանց գործոց։ Ապա ո՞ւր գիցուք սովորական պղծութեամբ զյօրացեալսն, լաւ էր նոցա թէ ոչ էր ծանուցեալ զարդարութեան ճանապարհն եւ որ ի կարգն խօսի։ Լո՛ւր Կլայեցւոյ. Որ ի խորհուրդ քո երկնային,

Մեռեալ մեղօք հոգով մերձին,
Ընդ աստուածասպանն կարգեսցին,
Կայիափայ եւ Աննային[1])։

Լո՛ւր Նարեկացոյն[2]), Մովսէսի, Սահակայ, Ներսէսի եւ Լուսաւորչի, Աստուծոյ՝ զքեզ յօրինողին, Արարչին՝ զքեզ զարդարողին, բիւրք բիւրուց եւ հազարք հազարաց կամակատարք, սիրելիք, բարեկամք, գոր-

1) Աննային. 2) Ներեկացոյն.